

Բ կայսրն 1786ին յանձն առաւ¹⁶²: Կ'երեւայ թէ Տաճկաստանի կողմանէ դժուարութիւնք ելած են այս ինդիւն գործադրելու:

Յամին 1781 Սուլթան Տաղիւ 129 Հայ ընտանիք¹⁶³ եւ յամին 1786՝ 114 ընտանիք¹⁶⁴ կային: Սակայն 1802ին շատցան Հայ ընտանիք մինչեւ 205 ընտանիք 965 հոգւով¹⁶⁵: Յամին 1820 Սուլթան կար 200 Հայ տուն¹⁶⁶, ուրեմն կրնանք 200 ընտանիքէ աւելի համարիլ: 1825ին Սուլթան կային 250, յամին 1857 նոյն իսկ 530¹⁶⁷ եւ այսօրս գրեթէ 300 Հայ ընտանիք 1200 հոգւով:

Միաբանութեան աւանդական ճիգը Մուսալիյ արեւելեան Հայոց վրայ նաեւ այն ատեն եռանդեամբ գործադրուեցաւ, երբ Պուքովինա Աւստրիական կայսրութեան անցաւ, եւ Յովսէփ Բ կայսեր բաղձանաց համեմատ¹⁶⁸ յաճախ առաքեալներ ղրկուեցան Սուլթանի Հայոց:

Այս վախճանաւ նախ քրիստոսիոր քորպուլի Հայ-կաթողիկէայ վարդապետն եւ Թրանսիլվանիոյ ժողովրդապետն 1782ին Սուլթան ղրկուեցաւ, ուր եւ հասաւ 1782 Մայիս 10ին¹⁶⁹, եւ սկսաւ աշխատիլ Հայերը դարձնելու: Կ'երեւայ թէ իւր արդիւնքն եղաւ ոչինչ. եւ այս փորձերն կայսեր հրամանաւ 1783 Յունիս 4ին՝ թէեւ առ ժամն՝ ի կախ թողուեցաւ¹⁷⁰:

Յամին 1796 այս փորձեր կրկնուեցան, վասն զի Սուլթանի Հայոց ղրկուեցաւ Հայ-կաթողիկէայ վարդապետն Յովսէփ Մոշորոյ¹⁷¹ — որուն անէն ցայսօր Չեռնովից կայ ընտանիք մը: